

1
ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

- Ընթացիկ հաշվետվություն
- Եռամսյակային ֆինանսական հաշվետվություն
- Տարեկան հաշվետվություն

**« ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ » բաց բաժնետիրական ընկերություն,
«ԵՈԳ» ԲԲԸ**

թողարկողի ֆիրմային անվանումը (անունը, ազգանունը)
Բաց բաժնետիրական ընկերություն

կազմակերպական - իրավական ձևը
ք.Երևան 0023, Արշակունյաց, 12 հեռ. 58-66-18, ֆաքս 52-57-13

գտնվելու վայրը, հասցեն, կապի միջոցները (հեռախոս, ֆաքս, էլ-փոստ և այլն)

N 1 14 .05. 2012թ.

հաշվետվության համարն ու ամսաթիվը

տեղաբաշխված արժեթղթերի դասը`	սովորական
արժեթղթերի քանակը`	10.348.896 հատ
արժեթղթերի անվանական արժեքը(արժույթը)`	1000

«Մենք` ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ հաշվետվությունում ներառվող տեղեկությունները ճշգրիտ և ստույգ են և չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել հաշվետվության ամբողջականությունը»:

ստորագրող անձինք` Ազատուհի Մակարյան	գլխ. հաշվապահ		14 .05. 2012թ..
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Ստորագրությունները վավերացնում են (ստորագրությունները վավերացվում են տնօրենների խորհրդի նախագահի կամ գործադիր տնօրենի կամ նման իրավասություն ունեցող այլ անձի կողմից)

Գազիկ Կաֆյան	գլխավոր տնօրեն		14 .05. 2012թ....-
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

« ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐԶԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ » ԲԲԸ

Միջանկյալ հաշվետվություն

I եռամսյակ 2011թ

Հասցե	ք.Երևան 0023, Արշակունյաց փ, 12
Հեռախոս	58-66-18, 52-53-21
Ֆաքս	52-57-13
Էլփոստ	Info@yerjewel.com
Ինտերնետ կայք	www.yerjewel.am

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

- Կառավարման մարմինների հայտարարությունը -էջ 3
- Միջանկյալ զեկույց 2012 թվականի 1-ին եռամսյակի. ընթացքում Ընկերության կողմից իրականացված գործունեության վերաբերյալ -էջ 4
- Ընկերության գործունեության վերաբերյալ տեղեկություններ- -էջ 8
- Տեղեկություններ Ընկերության նախատեսվող գործունեության վերաբերյալ--էջ 10
- Ընկերության ֆինանսական վերլուծություն 2011թ.- էջ 14
- Ընկերության ֆինանսական վիճակի և գործունեության արդյունքների վերաբերյալ տեղեկություններ-- էջ 15
- Ֆինանսական կայունության վերլուծություն --էջ 18
- Հաշվեկշռի իրացվելիության վերլուծությունը ---էջ 20
- Շրջանառու միջոցների շրջանառելիության վերլուծություն --էջ 21
- Տարեկան ֆինանսական հաշվետվություն

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մենք՝ «Երևանի Ոսկերչական գործարան» ԲԲԸ գլխավոր տնօրեն՝ Գագիկ Կաֆյանը գլխավոր հաշվապահ՝ Ազատուհի Մակարյանը սույնով հայտարարում ենք այն մասին, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Ընկերության ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների գեկույցը ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում է Ընկերության ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքները, զարգացումը և ներառում է այն հիմնական ռիսկերի նկարագիրը, որի հետ առնչվել կամ առնչվում է ընկերությունը:

Գլխավոր տնօրեն

Գագիկ Կաֆյան

Գլխավոր հաշվապահ

Ազատուհի Մակարյան

Միջանկյալ զեկույց

2012թ. առաջին եռամսյակի ընթացքում Ընկերության կողմից իրականացված գործունեության վերաբերյալ Ձեկուցող՝ «Երևանի Ոսկերչական գործարան» ԲԲԸ գլխավոր տնօրեն, Գագիկ Կաֆյան

Ստորև ներկայացնում ենք «ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ–ի 2012թ. 1-ին եռամսյակի ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ տեղեկատվություն:

2012 թվականի 1-ին եռամսյակի ընթացքում «ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ արտադրանքի, ապրանքների և ծառայությունների իրացումից հասույթը կազմել է 14 168,0 հազ. դրամ, որի դիմաց իրացման ծախսերը կազմել են 3 205,0 հազ. դրամ, նախորդ տարվա 2 169,0 հազ. դրամի դիմաց, իսկ վարչակառավարչական ծախսերը կազմել են 34 059.00 հազ. դրամ, նախորդ տարվա 30 853.00 հազ. դրամի դիմաց:

2012 թվականի 1-ին եռամսյակի ընթացքում ձեռնարկվել են միջոցներ անարդյունավետ ծախսերի կրճատման վերաբերյալ, մասնավորապես կրճատվել է գովազդի ծախսերը: Բնական է, ընկերության գործունեության ոլորտը ենթադրում է, որ գովազդի ծախսերը պետք է լինեն հիմնական ծախսային հոդվածներից մեկը, սակայն ելնելով առկա ֆինանսական իրավիճակից աշխատում ենք գտնել գովազդի ավելի քիչ ծախսատար տարբերակներ, օգտագործել ինտեռնետի հնարավորությունները:

Ընկերության 2012 թվականի 1-ին եռամսյակի տնտեսական գործունեության արդյունքում հաշվետու ժամանակաշրջանի վնասը կազմել է 30 848.0 հազ. դրամ, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի 31 584.0 հազ. դրամ վնասի դիմաց:

Ընկերության վնասը հիմնականում պայմանավորված է ոսկու գների կտրուկ տատանումներով: Տարին ճգնաժամային է ամբողջ աշխարհի համար և մենք չենք կարող անմասն մնալ դրանից: Պետք է հիշել, որ պատմականորեն ամեն մի ճգնաժամին

հաջորդում է տնտեսական վերածնունդ: Թե ինչքանով մեզ կհաջողվի վերադասավորել մեր ուժերը, օգտվելով իրավիճակից, նոր շուկաներ մտնելու համար, ամրապնդվելու արդեն ունեցած շուկաներում, պաշտպանել մեր արտադրողին, օգնել վաճառողին և վերավաճառողին՝ կախված կլինի ինչպիսի ձեռք բերումներով կամ կորուստներով դուրս կգա ճգնաժամից մեր ըկերությունը: Ներկայացված զարգացման ծրագիրը իր շեշտադրումներով կարող է հանդիսանալ հիմնարար՝ ճգնաժամին հակազդելու համար: Սա պետք է անել շտապ, ժամանակ չկորցնելով:

Բոլորիս հայտնի է, որ հունքի արժեքը ոսկերչության և ադամանդագործության մեջ հիմնական ծախսային տարրն է ինքնարժեքի ձևավորման գործընթացում: Անհրաժեշտ է ձևավորել ոսկերչական արտադրությունը թանկարժեք մետաղներով ապահովելու խնդիրը:

Ոսկու գնի կտրուկ տատանումների հետևանքով ռիսկերի կառավարման հնարավորությունը նվազում է, որի արդյունքում ոսկերչական իրերի արտադրությամբ զբաղվող կազմակերպությունների շրջանակը կտրուկ նվազում է: Սակայն «ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ, հիմնվելով ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ-1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ-ի հզորությունների և ճշգրիտ սարքավորումների տեխնիկական հզորությունների վրա, կատարում է կոնստրուկտորատեխնոլոգիական մշակման, նոր ոսկերչական իրերի ստեղծման և արտադրությունում ներդնելու ուղղությամբ աշխատանքներ՝ միաժամանակ ապահովելով շուկայի մարկետինգային ուսումնասիրություններ և նոր գնորդների հայտնաբերում: Երկու ընկերությունների համատեղ գործունեության արդյունքում ձևավորվել է առանձնահատուկ ձեռագրի ոսկերչական իրերի շուկա, որի պահպանումը Ընկերության գերխնդիրն է:

1. Անհրաժեշտ միջոցառումների ծրագիր , որը մասնավորապես ներառում է

- Ընկերությունում օգտագործման համար ոչ պիտանի, ինչպես նաև ֆիզիկապես մաշված գույքի դուրս գրման և / կամ / օտարման աշխատանքների իրականացում
- Թանկարժեք մետաղների շուկայական գների փոփոխությունների հետ կապված «Թանկարժեք մետաղների և դրանցից պատրաստված իրերի և թանկարժեք քարերի վերագնահատման կարգի» մշակման, սահմանված կարգով հաստատման և հաշվապահական հաշվառման քաղաքականությունում կիրառման աշխատանքների իրականացում
- հիմնական միջոցների և արագամաշ առարկաների վերագնահատման և օգտակար ծառայության ժանկետների վերանայման աշխատանքների իրականացում

2. «Երևանի Ոսկերչական գործարան» ԲԲԸ –ն 2012-2013 թվականների ֆինանսատնտեսական գործունեության Գործարար Ծրագիր, որի առանցքային դրույթներից է Ընկերության սեփականաշնորհման գործընթացը:

Գտնում ենք, որ Ընկերության համար կիրառելի են սեփականաշնորհման երեք հնարավոր տարբերակ՝

ա/. Միաձուլել «Երևանի Ոսկերչական գործարան» ԲԲԸ և Երևանի Ոսկերչական գործարան-1 «Գնոմոն» ԲԲԸ, կիրառելով ուղղակի վաճառքի եղանակը նախապես հայտնի գնորդի՝ Երևանի Ոսկերչական գործարան-1 «Գնոմոն» ԲԲԸ-ը:

բ/. «Երևանի Ոսկերչական գործարան» ԲԲԸ-ը կոնցեսիա հանձնել Երևանի Ոսկերչական գործարան-1 «Գնոմոն» ԲԲԸ-ը:

գ/. Արժեթղթերի մի մասը, մինչև 30 % տրամադրել ուղղակի վաճառքի եղանակով նախապես հայտնի գնորդի՝ Երևանի Ոսկերչական գործարան-1 «Գնոմոն» ԲԲԸ-ը:

Մնացած արժեթղթերը հանել ազատ վաճառքի

Ընկերության հիմնական նպատակն է՝

2012 թվականին և հաջորդ տարիների ընթացքում նշված հզորությունների առավելագույն օգտագործմամբ նվազեցնել արտադրական ծախսերը, կրճատել աշխատատարությունը, փոփոխել արտադրական կառուցվածքը, որոնց շնորհիվ իջեցնել արտադրանքի ինքնարժեքը՝ ապահովելով բարձր շահութաբերություն:

Ընկերության գործունեության վերաբերյալ տեղեկություններ

Ընկերության գործունեության հիմնական տեսակներն են՝ պերճանքի առարկաների, ոսկերչական իրերի և թանկարժեք զարդեղենի, ժամացույցների, թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի, կիսաֆաբրիկատների արտադրություն և վաճառք, նոր տեխնոլոգիաների մշակում, մասնագետների ուսուցման, վերապատրաստման, ցուցահանդեսների և տոնավաճառների կազմակերպում:

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 10 348 896 000 դրամ, որը կազմում է 10 348 896 հատ սովորական անվանական բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 1000 դրամ: Բոլոր 10 348 896 բաժնետոմսերը

տեղաբաշխված են բաժնետերերի միջև և լրիվ վճարված են նրանց կողմից, ընդ որում 8 279 117 սովորական անվանական բաժնետոմսեր (80 տոկոսը) համարվում են պետական սեփականություն (տնօրինվում են ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից), իսկ 2 069 779 սովորական անվանական բաժնետոմսեր (20 տոկոսը) սեփականության իրավունքով պատկանում են մասնակի անհատույց սեփականաշնորհման մասնակիցներին:

Ընկերության կառավարման բարձրագույն մարմինը բաժնետերերի ընդհանուր ժողովն է, ընդհանուր ղեկավարումն իրականացնում է տնօրենների խորհուրդը, իսկ գործունեության ղեկավարումն իրականացնում է գլխավոր տնօրենը:

Ընկերության արտադրության ուղղություններն են՝

- ոսկերչական իրերի պատրաստում և վաճառք;
- ոսկյա ժամացույցների(նաև թանկարժեք քարերով) պատրաստում և վաճառք;
- թանկարժեք և գունավոր մետաղներից մեղալների, հուշամեղալների պատրաստման պատվերների կատարում;
- ոսկերչական արտադրության սարքավորումների, հանդերձանքի, գործիքների պատրաստում և վաճառք;
- ծառայությունների մատուցում ;

Ընկերությունը բյուջեյի, սոցապի նկատմամբ պարտավորությունները կատարում է ժամանակին:

Ընկերության կառավարման մարմինների վերաբերյալ տեղեկություններ

Ընկերության կանոնադրությամբ սահմանված Ընկերության կառավարման մարմիններն են Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովը և Ընկերության գործադիր մարմինը՝ գլխավոր տնօրենը: Ընկերության կառավարմանը մասնակցող անձինք են՝ Գագիկ Կաֆյանը (գլխավոր տնօրեն), Ազատուհի Մակարյանը (գլխավոր հաշվապահ):

Ընկերության հետագա հնարավոր զարգացման նկարագիրը

Ընկերության գործունեության հիմնական ուղղություններն են՝

1. ոսկերչական իրերի նոր նմուշների մշակում, դրանց մոդելների և նմուշների պատրաստում;
2. ժամացույցների իրանների դիզայնի և համապատասխան կոնստրուկցիաների մշակում;
 - ոսկերչական արտադրության սարքավորումների, գործիքների մշակում և արտադրությունում ներդրում;

- ոսկերչական իրերի պատրաստմանն անհրաժեշտ հանդերձանքի, հարմարանքների նախագծում և ներդրում;
- շքանշանների, մեդալների, հուշամեդալների արտադրության նախապատրաստում;
- նոր տեխնոլոգիաների մշակում և ներդրում;
- մարքետինգային հետազոտության և պատվերների փաթեթի ապահովում:

Տեղեկություններ Ընկերության նախատեսվող գործնության վերաբերյալ

2012 թվականին նախատեսվող աշխատանքներ.

- 50 նոր ոսկերչական իրերի արտադրության համար անհրաժեշտ հանդերձանքի մշակում և պատրաստում,
- 5 նոր ժամացույցների արտադրության համար անհրաժեշտ հանդերձանքի մշակում և պատրաստում,
- 10-12 տիպի հորեյանական մեդալների, հուշամեդալների, պետական շքանշանների և մեդալների հանդերձանքի մշակում և պատրաստում,
- արույրից և ցամից պատրաստված դետալների խոշոր թողարկման համար անհրաժեշտ հանդերձանքի մշակում և պատրաստում: .

Ընկերության արտադրանքի սպառման հիմնական շուկաներն են հանդիսանում՝

- Ռուսաստանի Դաշնություն
- Ղազախստան
- Մոլդովա
- Գերմանիա
- Թուրքմենիա
- ԱՄՆ

Նշված շուկաներում զբաղեցրած դիրքերը ամրապնդելու և հետագա զարգացման համար անհրաժեշտ է ապահովել շուկայում բարձր պահանջարկ ունեցող տեսականու արտադրությունը: Տվյալ պահին թվարկված բոլոր շուկաներում բարձր պահանջարկ ունեն թեթև քաշ ունեցող ոսկերչական իրերը, ինչպես նաև սպիտակ ոսկյա իրերը թանկարժեք քարերով՝ հատկապես շատ քանակությամբ: Դիրքերը ամրապնդելու գրավական է համարվում պատվերների կատարման ժամանակահատվածի շարունակական նվազեցումը:

Բոլոր շուկաներում, ինչպես նաև կազմակերպվող տարբեր ցուցահանդեսներում լայն ներկայացվում և ակտիվ մասնակցություն են ունենում Հոնկոնգի և Չինաստանի տարեց

տարի զարգացող արտադրողները: Ի շնորհիվ ցածր աշխատանքային ծախսումների՝ օրինակ մեկ թանկարժեք քարի ներդրման արժեքը կազմում է 0.10 ԱՄՆ դոլար, նրանք առաջարկում են էժան և բարձր պահանջարկ ունեցող իրեր:

Հարկ է նշել, որ որակական հատկանիշներով այդ արտադրանքը գիջում է Ընկերության արտադրանքին: Ինչ վերաբերվում է Ընկերության արտադրանքի վերջնական սպառողներին, ապա նրանք հիմնականում հանդիսանում են նախկին ԽՍՀՄ քաղաքացիների, որոնք այժմ բնակություն են հաստատել այլ երկրներում:

Ուսումնասիրելով արտաքին շուկաներում ստեղծված իրավիճակն ու վերլուծելով տարբեր տոնավաճառներում մասնակցության արդյունքները, կարելի է արձանագրել, որ այժմ Ընկերության համար ռազմավարական նշանակություն է ձեռք բերում նախկին ԽՍՀՄ տարածքում դիրքերի ամրապնդումը և վաճառքի ավելացումը: Ի շնորհիվ շուկայում պահպանվող դիրքերի և Ընկերության առևտրային նշանի (բրենդի) հայտնի լինելուն, անհրաժեշտ է մաքսիմալ կերպով օգտագործել իրավիճակը՝ զուգահեռաբար տանելով աշխատանքներ այլ շուկաների հայթայթման և պահպանման գործում: Առանձին կետով հարկ է նշել, որ տվյալ մրցակցային պայմաններում հատուկ նշանակություն է ձեռք բերում ժամկետների և որակի պահպանումը:

Ընկերության արտադրանքի արտահանման հիմնական միջոցներն են.

- 1/ Ավիաուղիները
- 2/ Սուրհանդակային ծառայությունները
- 3/ Բեռնափոխադրող կազմակերպությունները:

Ընկերության արտադրանքը նախատեսված է միջին և բարձր խավի սպառողների համար: Այս արտադրանքը չունի տարիքային և սեռական սահմանափակում: Չնայած այն հանգամանքին, որ այն չի ներկայացնում կենսական անհրաժեշտություն, այն հանդիսանում է գեղեցկության և շքեղության խորհրդանիշ ինչպես կանանց, այնպես էլ տղամարդկանց համար: Ելնելով շարունակաբար բարդացող մրցակցային պայմաններից, անհրաժեշտ է դառնում ընդլայնել սպառողների ծավալը՝ ներգրավելով նաև բնակչության այն մասը, որն ունի կայուն, սակայն միջինից ցածր եկամուտ: Դրա հիմնական միջոց է հանդիսանում թեթև քաշով և հետևաբար հարաբերական ցածր գներով, իրերի արտադրությունը:

Ներքին շուկայում Ընկերության հիմնական մրցակիցներն են հանդիսանում ոսկու վաճառքով զբաղվող խոշոր խանութները, ինչպես նաև Երևան քաղաքի տարբեր շրջաններում տեղաբաշխված ոսկու շուկաները: Մրցակիցների կողմից մրցակցության հիմնական միջոցներ են հանդիսանում ցածր գինը և ակտիվ գովազդը: Արտաքին շուկայում Ընկերության հիմնական մրցակիցներ են հանդիսանում.

1. ՌԴ ներկայացնող մի քանի խոշոր և բավականաչափ հայտնի ընկերություններ, մասնավորապես՝ «Էստետ», «Ռուսսկիե սամոցվետի» և այլն: Ըստ առկա տեղեկատվության, «Էստետ» ֆիրման կատարում է պատվիրված ապրանքի մատակարարումը պատվերը տեղադրելուց 20 օր հետո, ինչը հանդիսանում է չափազանց արդյունավետ աշխատանքի ոճ և համարվում է պատվերների թվի աճի հիմնական գրավական:

2. ՌԿրահնական «Կիևի Ոսկերչական Գործարանը», Ղազախստանը ներկայացնող «Ալտին» Ֆիրման և այլն:

3. Թուրքական արտահանողները, որոնք ի շնորհիվ էժան աշխատուժի կարողանում են առաջարկել ցածր գներ:

4. Չինական արտադրողները, որոնք օգտվելով էժան աշխատուժից, ապահովում են տեխնիկապես բարդ իրերի արտադրությունը՝ միաժամանակ սահմանելով նրանց համար հարաբերական ցածր գներ: Հարկ է նշել, որ չինական արտադրանքի ուսումնասիրումը ցույց է տալիս, որ որակական հատկանիշներով նրանք զիջում են վերը շարադրյալ արտադրողների արտադրանքին:

5. Իտալական արտադրողները, որոնք ի շնորհիվ արտադրանքի բարձր որակի և հատկապես դիզայնի զբաղեցնում են համաշխարհային շուկայում խոշոր միջ:

Մեծածախ առևտրով զբաղվող հաճախորդներին Ընկերության մրցակիցների կողմից առաջարկվում են համագործակցության ճկուն տարբերակներ՝ սկզբնական փուլում կանխավճարային պայմաններով, հետագայում «վճարումը ապրանքը ստանալիս» և «ապառիկ» հիմունքներով: Տվյալ պայմաններում հետզհետե դժվարանում է մրցակցել արագ զարգացող չինական արտադրողների հետ:

Ընկերությունն այսօր հանդիսանում է մեդալների և հուշամեդալների միակ արտադրողը ներքին շուկայում: Տվյալ ոլորտը կարող է նաև շահավետ լինել Ընկերության համար արտաքին շուկայում որակական և գնային ճիշտ քաղաքականության մշակման դեպքում:

Ընկերության գործունեության վրա հնարավոր է բացասական ազդեցություն ունենալ.

- Ընկերության կողմից տեսականու նորացման և թարմացման ուշացումը
- Գների կտրուկ աճի դեպքում
- Համաշխարհային շուկայում ոսկու գների կայունության դեպքում ազգային տարադրամի շարունակական արժևորումը
- Գնային սխալ քաղաքականության իրականացում
- Ժամկետների խախտում
- Գովազդի բացակայություն

Հարկային օրենսդրության կտրուկ փոփոխություններ

Մարքեթինգային ուսումնասիրությունների բացակայությունը

Ամենակարևորը - դա ավանդական շուկաների պահպանումն է և նոր շուկաների հայթհայթումն է: Սրա հետ կապված կուզենայի նշել, որ արտադրողները առևտրային ցանցին ոսկերչական իրերը որպես կանոն տրամադրում են վճարման տարեկետման իրավունքով, սա առավել ակտուալ է ներկայիս ֆինանսատնտեսական իրավիճակում:

Արտադրողներին էլ որպես կանոն տրամադրվում է կոնսիգնացոն եղանակով և շուկայական գնից ցածր գնով: Այստեղ մեծ է բանկերի դերը, հաշվի առնելով հեյջինգի (ապահովագրման) մեխանիզմի կիրառումը: Պետք է ձգտենք ներդնել այս մեխանիզմը, ներգրավել մեր բանկերին, իհարկե ՀՀ ԿԲ համակարգող դերակատարությամբ:

Այս աշխատածևի կիրառման համար անհրաժեշտ պայման է տեղական ոսկիարդյունահանող ձեռնարկությունների զարգացումը:

Մեր ներքին աշխատանքում պետք է ապահովենք մարքեթինգի ծառայության կողմից շուկաների մանրակրկիտ ուսումնասիրությունը և վերլուծությունը, հիմնվելով դրա վրա 2012-2013 թ.թ. հասնենք տեսականու աճի՝ մինչև 150 տեսակ իրի, ըստ շուկաների, 11 նոր մեդալների կոնստրուկտորա - տեխնոլոգիական մշակում և ներդրում, 3 ժամացույցների մոդելների մշակում և ներդրում, էլեկտրոնեռզիոն հարգադրոշմների արտադրության իրականացում, արտադրության դիֆերսիֆիկացիա, մասնավորապես ոչ թանկարժեք մետաղներից աքսեսուարների արտադրություն:

Եվ իհարկե, բոլոր դեպքերում, շուկայական տնտեսության պայմաններում, պետք է կարողանանք բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը, ապահովել ֆինանսական ներդրումների բարձր արդյունավետությունը, աշխատել խնայողաբար, ուստի միայն այս դեպքում կկարողանանք կյանքի կոչել մեր բոլոր պլանները:

Գագիկ Կաֆյան

Գլխավոր տնօրեն

Ազատուհի Մակարյան

Գլխավոր հաշվապահ

Ընկերության ֆինանսական վերլուծություն

1-ին եռամսյակ 2012թ.

Նկատի ունենալով 2012 թվականի 1-ին եռամսյակի «Երևանի Ոսկերչական գործարան» ԲԲԸ տարեկան ֆինանսական հաշվետվությունը, ներկայացնում են ընկերության 2012 թվականի 1-ին եռամսյակի տարեկան ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ որոշ տվյալներ.

Ընկերության ընդհանուր ակտիվները հաշվետու եռամսյակի վերջի դրությամբ կազմել է 3604463,0 հազ.դրամ, այդ թվում ոչ ընթացիկ ակտիվները 837680,0 հազ.դրամ, ընթացիկ ակտիվները՝ 2793032,0 հազ.դրամ, որոնք կազմում են ընդհանուր ակտիվների համապատասխանաբար 23.24% և 76.76%-ը:

2012 թվականի 1-ին եռամսյակի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում հաշվետու ժամանակաշրջանի վնասը կազմել է 30 848.00 հազ.դրամ:

Հաշվապահական հաշվառման կազմակերպման համար պատասխանատու է գլխավոր տնօրենը:

Ընկերությունում հաշվապահական հաշվառումն իրականացվում է 1C- Ձեռնարկություն հաշվապահական ծրագրով:

**Ընկերության ֆինանսական վիճակի և գործունեության
արդյունքների վերաբերյալ տեղեկություններ**

Ամփոփ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն (հազ.ՀՀ դրամ)
2012թ.1-ին եռ. Աղյուսակ 1

Ցուցանիշի անվանումը	2012թ. 1-ին եռ.
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ	14 168
Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք	(9 022)
Համախառն շահույթ (վնաս)	5 146
Իրացման ծախսեր	(3 205)
Վարչական ծախսեր	(34 059)
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս)	(32 118)
Գործառնական այլ եկամուտներ	4 605
Գործառնական այլ ծախսեր	(3 425)
Գործառնական շահույթ (վնաս)	(30 938)
Ֆինանսական ծախսեր	-
Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումների գծով շահույթ (վնաս) Ընդհատվող գործառնությանը վերագրելի ո	-
Ընդհատվող գործառնությանը վերագրելի ակտիվների վաճառքներից և պարտավորությունների մարումներից շահույթ (վնաս)	-
Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս)	90
Սովորական գործունեությունից շահույթ (վնաս)	(30 848)
Արտասովոր դեպքերից շահույթ (վնաս)	-
Ձուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը	(30 848)
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	-
Ձուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	(30 848)

Ամփոփ Հաշվապահական Հաշվեկշիռ ապրիլի 30-ի դրությամբ (հազ.ՀՀ դրամ)

Աղյուսակ 2

Ցուցանիշի անվանումը	2012թ. 1-ին եռ.
Հիմնական միջոցներ	755 253
Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ	14 004
Ոչ նյութական ակտիվներ	
Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ	584
Այլ ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ	-
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	67 839
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	837 680
Պաշարներ	853 652
Տրված ընթացիկ կանխավճարներ	12 371
Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով	1 801 642
Այլ դեբիտորական պարտքեր	61 147
Ընթացիկ ֆինանսական ներդրումներ	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	26 114
Այլ ընթացիկ ակտիվներ	11 857
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	2 766 783
Ընդամենը ակտիվներ	3 604 463
Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի զուտ գումար	10 348 896
Էմիսիոն եկամուտ	-
Կուտակված շահույթ	(7 136 472)
Պահուստային կապիտալ	-
Սեփական կապիտալի այլ տարրեր	-
Ընդամենը սեփական կապիտալ	3 212 424
Երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ	-
Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ	144 051
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ	144 051
Կարճաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ	-
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	238 337
Ստացված ընթացիկ կանխավճարներ	-
Այլ կրեդիտորական պարտքեր	9 232
Այլ ընթացիկ պարտավորություններ	419
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	243 988
Ընդամենը պարտավորություններ	392 039
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ	3 604 463

**Դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ տվյալներ ապրիլի 30-ի դրությամբ
(հազ.ՀՀ դրամ)**

Աղյուսակ 3

Ցուցանիշի անվանումը	2012թ.1-ին եռ.
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի սկզբին	46 994
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	(20 251)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	(612)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	(243)
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին	26 114

Ֆինանսական կայունության վերլուծություն

1. **Ֆինանսական անկախության գործակիցը** ցույց է տալիս, թե ընկերության ընդհանուր միջոցների որ մասն է ձևավորվել սեփական կապիտալի հաշվին: Այլ կերպ, այն սեփական կապիտալի տեսակարար կշիռն է կազմակերպության ընդհանուր կապիտալում:

$$Q1 = \frac{\text{Սեփական կապիտալ}}{\text{Հաշվեկշռի հանրագումար}} = \frac{3212424}{3604463} = 0,89$$

Այս ցուցանիշի ցանկալի փոքրագույն մակարդակը կազմում է 0.5:

2. **Պարտավորությունների և սեփական կապիտալի հարաբերակցության գործակիցը** իր իմաստով մոտ է նախորդ գործակցին և ցույց է տալիս, թե սեփական կապիտալի միավորի հաշվով որքան պարտավորություններ ունի կազմակերպությունը:

$$Q2 = \frac{\text{Պարտավորություններ}}{\text{Սեփական կապիտալ}} = \frac{392039}{3212424} = 0,12$$

Այս ցուցանիշի ցանկալի փոքրագույն մակարդակը կազմում է 1:

3. **Ինքնավարության գործակիցը** ցույց է տալիս, թե կազմակերպության միջոցների, որ մասն է ձևավորվել երկարաժամկետ ներգրավված աղբյուրների հաշվին:

$$Q3 = \frac{\text{Սեփական կապիտալ + երկարաժամկետ պարտավորություններ}}{\text{Հաշվեկշռի հանրագումար}} = \frac{3356475}{3604463} = 0.93$$

Այս գործակիցը ավելի մեղմ է, քան ֆինանսական անկախության գործակիցը, դրա իջեցումը դիտվում է որպես բացասական երևույթ, քանի որ իր միջոցների ֆինանսավորման համար արդեն սկսել է ներգրավել միջոցներ կարճաժամկետ հիմունքներով:

4. **Գործող կապիտալ:** Այն ցույց է տալիս, թե ընթացիկ ակտիվների, որ մասն է ապահովված սեփական կապիտալով և երկարաժամկետ պարտավորություններով կամ երկարաժամկետ հիմունքներով ներգրավված միջոցների որ մասն է ուղղված ընթացիկ ակտիվների ֆինանսավորմանը:

$$Q4 = \text{Ընթացիկ ակտիվներ-Կարճ պարտավորություններ} \quad 2766783 - 247988 = 2518795$$

5. Ընթացիկ ակտիվների՝ գործող կապիտալով ապահովվածության գործակից: Այն ցույց է տալիս, թե ընկերության ընթացիկ ակտիվների, որ մասն է ձևավորվել սեփական կապիտալի և երակարածամկետ պարտավորությունների հաշվին:

$$Q5 = \frac{\text{Գործող կապիտալ}}{\text{Ընթացիկ ակտիվներ}} = \frac{2518795}{2766783} = 0,91$$

Այս ցուցանիշի նորմատիվային փոքրագույն արժեքը կազմում է 0,1:

6. Պաշարների գործող կապիտալով ապահովվածության գործակից: Այն ցույց է տալիս ընկերության ապրանքանյութական պաշարների, որ մասն է ձևավորվել սեփական կապիտալի և երկարածամկետ պարտավորությունների հաշվին:

$$Q6 = \frac{\text{Գործող կապիտալ}}{\text{Պաշարներ}} = \frac{2518795}{853652} = 2.95$$

7. Սեփական կապիտալի մանևրայնության գործակից: Այն ցույց է տալիս, թե ընկերության սեփական կապիտալի հաշվին ձևավորված միջոցների, որ մասն է գտնվում շարժունակ (մոբիլ) վիճակում:

$$Q7 = \frac{\text{Գործող կապիտալ}}{\text{Սեփական կապիտալ}} = \frac{2518795}{3212424} = 0,78$$

Չաշվեկշռի իրացվելիության վերլուծությունը

Իրացվելիությունը բնութագրող ցուցանիշներն են.

1. **Ընթացիկ իրացվելիության գործակից:** Այն ցույց է տալիս ընկերության կարճաժամկետ պարտավորությունների ընթացիկ ակտիվներով ապահովվածության աստիճանը և որոշվում է ընթացիկ ակտիվների և կարճաժամկետ պարտավորությունների հարաբերությամբ:

$$Q8 = \frac{\text{Ընթացիկ ակտիվներ}}{\text{Կարճաժամկետ պարտավորություններ}} = \frac{2766783}{247988} = 11.16$$

Այս ցուցանիշի սահմանային նվազագույն արժեքը 2 է:

2. **Արագ իրացվելիության գործակից:** Այն ցույց է տալիս կարճաժամկետ պարտավորությունների առավել իրացվելի ակտիվներով ապահովվածության աստիճանը և որոշվում է առավել իրացվելի ակտիվների (դրամական միջոցներ, կարճաժամկետ ֆինանսական ներդրումներ, դեբիտորական պարտք) և կարճաժամկետ պարտավորությունների հարաբերությամբ:

$$Q9 = \frac{\text{Արագ իրացվելի ընթացիք ակտիվներ}}{\text{Կարճաժամկետ պարտավորություններ}} = \frac{1857574}{247988} = 7.49$$

Այս ցուցանիշի սահմանային նվազագույն արժեքը 1 է:

ՇՐՋԱՆԱՌՈՒ ՄԻՉՈՑՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՌԵԼԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1. Ակտիվների շրջանառելության գործակից: Այս ցուցանիշը բնութագրում է համախառն ակտիվների շրջանառության արագությունը:

$$Q10 = \frac{\text{Արտադրանքի իրացումից հասույթ}}{\text{Ակտիվների միջին մեծություն}} = \frac{14168}{3617837} = 0.004$$

2. Ընթացիկ ակտիվների շրջանառելության գործակից: Այս ցուցանիշը բնութագրում է ընթացիկ ակտիվների շրջանառության արագությունը:

$$Q11 = \frac{\text{Արտադրանքի իրացումից հասույթ}}{\text{Ընթացիկ ակտիվների միջին մեծություն}} = \frac{14168}{2779908} = 0.005$$

3. Պատրաստի արտադրանքի շրջանառելության գործակից: Այս ցուցանիշը բնութագրում է պատրաստի արտադրանքի շրջանառության արագությունը:

$$Q12 = \frac{\text{Իրացված արտադրանքի արտադրական արժեք}}{\text{Պատրաստի արտադրանքի միջին մեծություն}} = \frac{9022}{527137} = 0.02$$